Աշխատանքի ծածկագիր 0891

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 19.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա.Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ.Աբգարյանի
Ա.Վարդանյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են տարբերակ 5-ի **քրեական իրավունքի բաժնի** 7-րդ և 25-րդ հարցերը:

Հարց 7

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, առաջադրանքի թեստային պատասխաններից Հավակնորդը պետք է ընտրեր այն միակը, որն առավել համակողմանիորեն և սպառիչ կերպով բովանդակում էր խնդրի ճիշտ լուծումը: Ներկայացված խնդրում դա տարբերակ «գ»-ն է:

Հարց 25

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ Հավակնորդի բերած հիմնավորումները ըստ էության վերաբերելի չեն. խնդրում չի վիճարկվում «Գ»-ի և «Ե»-ի՝ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ լինելու հանգամանքը, երկուսն էլ հանդիսանում են հատուկ սուբյեկտներ, սակայն ունեն էականորեն տարբեր կարգավիճակներ: Քրեական օրենսգրքում օբյեկտիվ կողմից նույնական արարքների կատարման համար այս սուբյեկտների տեսանկյունով նախատեսված են առանձին հանցակազմեր, ինչն էլ ենթադրում էր հանցագործությունների որակման կանոնների հստակ կիրառում:

Բողոքարկվել են **քրեական դատավարություն բաժնի** 2-րդ, 5-րդ, 22-րդ, 29-րդ և 30-րդ հարցերը:

Հարց 2

Վիճարկման արդյունքում գնահատականը բարձրացվում է 1 միավորով, քանի որ խնդիրը հստակ ձևակերպված չէ, կարող են որպես ճիշտ պատասխան դիտարկվել նաև այլ տարբերակները: Բողոքում հավակնորդի ներկայացրած հիմնավորումները Հանձնաժողովի կողմից դիտարկվել են ողջամիտ՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության և խնդրի ձևակերպումների ոչ միանշանակությունը:

Հարց 5

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ Հավակնորդի հիմնավորումները հակասում են ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշմանը: Դատարանը պարտավոր էր ձեռնարկել անհրաժեշտ և հնարավոր բոլոր միջոցները վկայի ներկայությունը և հարցաքննությունը դատարանում ապահովելու ուղղությամբ և հրապարակել նախաքննական ցուցմունքը միայն չներկայանալու օբյեկտիվ պատճառների առկայության պարագայում, օրինակ՝ նրա վրա ամբաստանյալի անօրինական ներազդեցություն գործելու կամ սպառնալիքների վերաբերյալ փաստական տվյալների առկայության, մահվան դեպքում և այլն: Ավելին, խնդրի փաստական տվյալներից չի բխում, որ վկայի ցուցմունքը եղել է միակը կամ վճռորոշը, որի վրա հիմնվելով էլ՝ Հավակնորդը ներկայացրել է իր բողոքը:

Հարց 22

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ Հավակնորդի պահանջը և հիմնավորումները հակասում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի ուղղակի կարգավորմանը:

Հարց 29

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, առաջադրանքի թեստային պատասխաններից Հավակնորդը պետք է ընտրեր այն միակը, որն առավել համակողմանիորեն և սպառիչ կերպով բովանդակում էր խնդրի ճիշտ լուծումը: Ներկայացված խնդրում դա տարբերակ «գ»-ն է:

Հարց 30

Վիճարկման արդյունքում գնահատականը բարձրացվում է 1 միավորով, քանի որ խնդիրը հստակ ձևակերպված չէ, որի պայմաններում հնարավոր չէ ընտրել ճիշտ պատասխանը: Խնդրի համաձայն՝ մեղադրողը «հրաժարվել է մեղադրանքից»,

ուստի, խնդրի «բ» տարբերակը ճիշտ կլիներ, եթե մեղադրողը հանդես գար քրեական հետապնդումը իրականացնելուց հրաժարվելու մասին հայտարարությամբ կամ միջնորդությամբ: Ավելին, տվյալ դեպքում՝ մեղադրողը հրաժարվել է մեղադրանքից ոչ արդարացնող հիմքի ի հայտ գալու հիմնավորմամբ:

Հանձնաժողովի վերոնշյալ եզրահանգումը բխում է Կարեն Արարատի Ստեփանյանի և Մկրտիչ Աշոտի Հովհաննիսյանի վերաբերյալ ՏԴ2/0030/01/13 գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման տրամաբանությունից:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 0891 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական դատավարության բաժնի 2-րդ և 30-րդ հարցերի պատասխանը գնահատել յուրաքանչյուրը 1 միավոր, ընդհանուր՝ 2 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Լ.ԱԲԳԱՐՅԱՆ

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ